Կարգապահական գործ թիվ ԿԳ-17113

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մայիսի 15-ի թիվ 112-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/85-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լուսինե Սահակյանին (արտոնագիր թիվ 999) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

30.08.2017թ. Պալատ է մուտքագրվել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող**) դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 24.08.2017թ. որոշումը (**այսուհետ նաև՝ Որոշում կամ Դատական սանկցիա**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. օգոստոսի 24-ի հերթական դատական նիստում պաշտպան Լուսինե Սահակյանը Դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որը պայմանավորված է եղել նրանով, որ վերջինս առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը, հայտնելով, որ նպատակահարմար չի գտնում ներկա գտնվելու դատական նիստին,

քանի որ լիազորված չէ վստահորդի կողմից վերջինիս բացակայությամբ ներկայացնելու շահերը դատարանում:

Դատարանը հայտնել է, որ նույն քրեական գործի քննության ժամանակ դատավարության մասնակից փաստաբան Լուսինե Սահակյանը դրսևորել է մի վարքագիծ, որը Դատարանը գնահատում է ոչ հարիր ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանի համար և գտել է, որ դա ոչ միայն հակասում է, այլև՝ խախտում է փաստաբանի վարքագծի կանոնագրքի համապատասխան դրույթները, և Դատարանի նկատմամբ դրսևորված նման անհարգալից վերաբերմունքին ավելի մեղմ՝ նախազգուշացմամբ արձագանքելը չի կարող ծառայել դատական սանկցիա կիրառելու նպատակներին:

Դատարանը գտել է նաև, որ անկախ փաստաբանի դրսևորած վարքագծի շարժառիթներից, պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատ դիմում ներկայացնելն անհրաժեշտ է, քանի որ նման պահելաձևը կարող է խաթարել թե՛ դատարանների, թե՛ փաստաբանների հեղինակությունը, և նման պահելաձև դատական նիստերում դրսևորելն անթույլատրելի է:

Դատարանը որոշել է ամբաստանյալ Արայիկ Հակոբյանի և Մարտիրոս Հակոբյանի պաշտպան Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 15.09.2017թ. թիվ 297-Ա/ԿԳ-17113 որոշմամբ փաստաբան Լուսինե Սահակյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

20.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Կարեն Քամալյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 24.08.2017թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Դիմողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է նիստի ժամանակի և վայրի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Պատասխանողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է նիստի ժամանակի և վայրի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Նախապատրաստողը 19.11.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը հաստատված է համարել, որ փաստաբան Լուսինե Սահակյանը առանց դատական նիստը նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը՝ հայտնելով, որ նպատակահարմար չի գտնում ներկա գտնվելու դատական նիստին, քանի որ լիազորված չէ ներկայացնելու իր վստահորդի շահերը վերջինիս բացակայությամբ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 22.11.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 15.05.2018թ. ժամը՝ 20:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. օգոստոսի 24-ի հերթական դատական նիստում Պաշտպան Լուսինե Սահակյանը միացել է Պաշպանների կողմից ներկայացված միջնորդությանը՝ դատական նիստը հետաձգելու մասին:

Նշված փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ (թիվ 1 03 2017_08_24 11-27-04):

- Պաշտպան Լուսինե Սահակյանը հայտարարել է, որ եթե դատարանը չբավարարի ներկայացված միջնորդությունը, ապա ինքը չի մասնակցի դատական նիստին:

Նշված փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ (թիվ 1 03 2017_08_24 11-42-05), դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ:

- Դատարանը մերժել է դատական նիստը հետաձգելու մասին միջնորդությունը:

Նշված փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ (թիվ 1 03 2017_08_24 11-42-05), դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ:

- Պաշտպան Լուսինե Սահակյանը հայտարարել է, որ չի շարունակելու մասնակցել նշված դատական նիստին:

Նշված փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ (թիվ 1 03 2017_08_24 11-42-05), դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Լուսինե Սահակյանի (արտոնագիր 999, ստացված՝ 12.11.1996թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 12 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (9 ավարտված վարույթ և 3 ընթացիկ վարույթ):

Խորհրդի 17.03.2016թ. թիվ ԿԳ/66-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ տույժի՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացի մասնակցության՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի խախտման համար,որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 25.01.2018թ. թիվ ԿԳ/08-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 10.04.2018թ. թիվ ԿԳ/72-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 10.04.2018թ. թիվ ԿԳ/73-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 03.05.2018թ. թիվ ԿԳ/80-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 14.12.2017թ. թիվ ԿԳ/127-Ա, 14.12.2017թ. թիվ ԿԳ/128-Ա, 20.03.2018 թիվ ԿԳ/56-Ա, 07.04.2018 թիվ ԿԳ/66-Ա Լուսինե Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Լուսինե Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Կարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ *կարգապահական վարույթն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:*

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:* **Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** *եթե կողմը հրաժարվում է (խուսափում է) պատասխանել Նախապատրաստողի հարցերին կամ բացատրություններ տալ, ապա Նախապատրաստողը մյուս կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել կողմի հրաժարվելը (խուսափելը) պատասխանից և բացատրություններից, իսկ գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է բացատրություն կամ պատասխան տալուց, կարող է համարել ապացուցված: Ամեն դեպքում պատասխանից կամ բացատրությունից Նախապատրաստողի կողմից*

որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Սույն կանոնը կարող է կիրառել նաև Պալատի խորհուրդը: **Նույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝** *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Վերոնշյալ կանոններից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն ընթանում է դիմողի և պատասխանողի մրցակցության սկզբունքի հիման վրա, և վերջիններս կենտրոնական տեղ են զբաղեցնում ապացուցողական գործընթացում: Դիմողի և պատասխանողի կողմից ներկայացվող ապացույցների օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման և վերլուծության հիման վրա է Խորհուրդը կայացնում գործն ըստ էության լուծող որոշում՝ համապատասխան իրավական եզրահանգման գալով պատասխանող փաստաբանի կողմից փաստաբանական էթիկայի կանոնների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Խորհրդի կողմից պատասխանող փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման հիմքն իրենից ներկայացնում է գործով ներկայացված ապացույցներով հաստատված փաստական հանգամանքների այնպիսի համակցություն, որը ողջամիտ համոզմունք է ձևավորում Խորհրդի մոտ փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման վերաբերյալ:

Կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք կվկայեն փաստաբանի կողմից կարգապահական խախտման կատարման մասին: Կողմերից յուրաքանչյուրը կրում է իր պնդումները հիմնավորելու և դրանք հաստատող ապացույցները Պալատին ներկայացնելու պարտականությունը, որը ոչ պատշաճ կատարելու դեպքում կրում է նաև դրա բացասական հետևանքները՝ կարգապահական գործի՝ իր համար ոչ բարենպաստ իրավական ելքի ձևով: Իսկ Պալատը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանիորեն ուսումնասիրելով և գնահատելով կողմերի ներկայացրած ապացույցներն ու փաստարկները, կայացնում է պատճառաբանված որոշում:

Սույն կարգապահական գործով Խորհուրդը հաստատված է համարում, որ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 24.08.2017թ. դատական նիստում փաստաբան Լուսինե Սահակյանը հայտարարել է, որ չի պատրաստվում մասնակցել դատական նիստին, սակայն գործում առկա ապացույցներից, այդ թվում՝ դատական նիստի ձայնագրառման կրիչի ուսումնասիրությունից հնարավոր չէ պարզել Պատասխանողը լքում է դատական նիստը, թե՝ ոչ:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով

կիիմնավորվեր Լուսինե Սահակյանի կողմից առանց նախագահողի թույլտվության դատական նիստերի դահլիճը լքելու վարքագիծը:

Հետևաբար, Դիմողի կողմից վկայակոչված հանգամանքները՝ այն, որ Պատասխանողը առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը՝ համարվում են չապացուցված: Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի արարքում առկա չեն Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 15.09.2017թ. թիվ 297-Ա/ԿԳ-17113 որոշմամբ փաստաբան Լուսինե Սահակյանի (արտոնագիր՝ թիվ 999) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան

15 մայիսի 2018թ.
թիվ ԿԳ/85-Ա
ք. Երևան